Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-991-30.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՕՐԵՆՔ

<<ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվական, N ՀՕ-193) 3-րդ հոդվածի <<պատշաճ ձևով տեղեկացում կամ փաստաթղթերի ուղարկում>> հասկացությունում <<կապի այլ միջոցների օգտագործմամբ>> բառերից հետո լրացնել << կամ էլեկտրոնային համակարգի միջոցով>> բառերը:

Հոդված 2. 25-րդ հոդվածում

1. 2-րդ մասում <<երեք>> բառը փոխարինել <<հինգ աշխատանքային>> բառերով,

2. 3-րդ մասում <<անժամկետ>> բառից հետո լրացնել <<, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ>> բառերը:

Հոդված 3. Օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների 2-րդ մասում, 30-րդ հոդվածի 5-րդ մասում <<կամ փոստով>> բառերից հետո լրացնել <<կամ էլեկտրոնային համակարգի միջոցով>> բառերը:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում

1. 1-ին պարբերությունում <<երեք>> բառը փոխարինել <<հինգ աշխատանքային>> բառերով,

2. 3-րդ պարբերությունում <<ապա>> բառից հետո լրացնել <<հայտատուն համարվում է լիցենզավորված սույն մասում նշված ժամկետին հաջորդող 5-րդ աշխատանքային օրը և այդ օրվանից իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, իսկ>> բառերը, իսկ <<, և լիցենզիան հայտատուին հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից հայտատուն իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով>> բառերը հանել:

Հոդված 5 Օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասից հետո լրացնել 9-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<9. Լիցենզիայի վերաձևակերպման հայտը կարող է լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով:>>

Հոդված 6. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<<Հ/Հ	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցենզա-վորող մարմինը	Լիցեն-զիայի տեսակը	Ոլորտ	Փորձաքննության պահանջ	Մրցու-թային կարգով	Որակա-վորման պահանջ	Հաշվե-տվու-թյան պահանջ	Վայրի պահանջ
1	2	3	4	5	6	7	8	9	10
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ	Բ	-		-	Ո	Հ	Վ
3.	Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր	ԿՄ	Պ	-	-	-	-	-	-
4.	Զենքի արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
5.	Զենքի առևտուր	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
6.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված դրանց պրեկուրսորների արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ		Ո	Հ	Վ
7.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
8.	Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	-

	արտահանում								
9.	Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	-
10.	Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների մատուցում)	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	-
	2. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում	ԿՄ	Պ	Ա	-	-	-	Հ	-
	3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								

1.	Դեղերի արտադրություն	ԿՄ	Բ		Փ	-	-	Հ	Վ
2.	Դեղատնային գործունեություն	ԿՄ	Բ	-	-	-	Ո	-	Վ
3.	Կազմակերպություններ ի կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	Ո	-	Վ
4.	Գենետիկ ինժեներիայի գործունեություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	Բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	-	Փ	-	-	-	Վ
	4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
2.	Արտարժույթի առքուվաճառք	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
3.	Արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների կազմակերպում	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
	5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Ներդրումային ծառայությունների մատուցում՝ ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայությունների տեսակների	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	-
2.	Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեություն	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
3.	Կենտրոնական	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-

	դեպոզիտարիայի գործունեություն								
	6. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Բանկային գործունեություն	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
2.	Գրավատների կազմակերպում	ԿԲ	Բ	-	-	-	-	Հ	Վ
3.	Ինվեստիցիոն հիմնադրամների գործունեություն	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
4.	Կյանքի ապահովագրության իր ականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
5.	Ոչ կյանքի ապահովագրության իր ականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
6.	Ինկասացիոն ծառայությունների մատուցում	ԿՄ	Բ	-	-	-	Ո	-	-
7.	Վարկային բյուրոյի գործունեություն	ԿԲ	Բ	-	-	-	-	Հ	-
8.	Ապահովագրական բրոքերային գործունեություն	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	-
9.	Վարկային կազմակերպության գործունեություն	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
10.	Դրամական (փողային) փոխանցումների իրականացում	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	-

11.	Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում	ԿԲ	Բ	-	-	-	Ո	Հ	-
12.	Կյանքի վերաապահովագրության իրականացում	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
13.	Ոչ կյանքի վերապահովագրության իրականացում	ԿԲ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-
	7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրություն	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Անասնաբուժասանիտարական փորձաքննություն	ԿՄ	Պ	-	Փ	-	Ո	Հ	Վ
3.	Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրություն և (կամ) վաճառք	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
	8. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Բնական գազի փոխադրում, բաշխում, ներկրում, արտահանում, փոխադրման և բաշխման ցանցի կառուցում	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	-	Հ	Վ
2.	էլեկտրական կայանների կառուցում և վերականգնում, էլեկտրական էներգիայի արտադրություն (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	-	Հ	Վ

	արտադրությունը), հաղորդում, բաշխում, արտահանում, ներկրում, հաղորդման և բաշխման ցանցի կառուցում								
3.	Ջերմային կայանների կառուցում և վերականգնում, ջերմային էներգիայի արտադրություն, փոխադրում, բաշխում, փոխադրման և բաշխման ցանցի կառուցում	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	-	Հ	Վ
4.	էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայություններ	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	-	Հ	Վ
5.	էներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	-	Հ	-
	9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	Վ
2.	Տարրական հանրակրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	Վ
3.	Հիմնական հանրակրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	Վ
4.	Միջնակարգ հանրակրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	Վ
5.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
6.	Միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում,	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-

	բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի								
7.	Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
	10. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ (ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ) ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի	ՀԾԿՀ	Բ	Ա	-	-	Ո	Հ	Վ
2.	Ձայնային ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
3.	Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
4.	Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում	ՀՌԱՀ	Բ	-	-	Մ	-	-	Վ
	11. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
	12. ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Մաքսային և ազատ մաքսային պահեստներում ապրանքների	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ

	պահպանություն								
2.	Անմաքս առևտրի խանութներում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
3.	Մաքսային փոխադրողի գործունեություն	ԿՄ	Բ	Ա	-	-	-	Հ	-
4.	Մաքսային հսկողության տարածքների կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
5.	Ազատ տնտեսական գոտիների կազմակերպում և շահագործում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
	13. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Միջուկային տեղակայանքների կամ ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կամ ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրում կամ նախագծում կամ կառուցում կամ շահագործում կամ շահագործումից հանում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Միջուկային նյութերի կամ ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի կամ ռադիոակտիվ թափոնների ներմուծում կամ արտահանում	ՀՀԿ	Բ	-	-	-	-	Հ	-
3.	Միջուկային նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
4.	Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ

	փոխադրում կամ պահեստավորում								
5.	Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի արտադրություն կամ օգտագործում կամ վերանորոգում կամ մոնտաժում և կարգաբերում կամ փոխադրում կամ պահեստավորում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
6.	Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում կամ կարգաբերում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
7.	Ռադիոակտիվ թափոնների վերամշակում կամ պահում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
8.	Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության իրականացում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
9.	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում կամ պատրաստում	ԱԷՕԲԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
10.	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի և այլ փաստաթղթերի փորձաքննություն	ԱԷՕԲԿՄ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
11.	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն	ԱԷՕԲԿՄ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
	14. ՇՐՋԱԿԱ								

	ՄԻՁԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Վտանգավոր թափոնների վերամշակում, , վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
	15. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ, ՇԱՀՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Վիճակախաղերի կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	-
2.	Շահումներով խաղերի կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
3.	Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում	ԿՄ	Պ					Հ	Վ
4.	Խաղատների կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
	16. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Երկաթուղային տրանսպորտի գործուն եության կազմակերպում	ԿՄ	Բ	Ա	Փ	-	Ո	Հ	-
2.	Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
3.	Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
4.	Անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումնե	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-

	րի կազմակերպում								
5.	Անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ ի կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
	17. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինանարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
2.	Շինարարության իրականացում (բացառությամբ շինանարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ	Բ	-	-	-	-	-	-
3.	Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինանարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ	Բ				Ո	Հ	
4.	Ինժեներական հետազննում	ԿՄ	Բ	-	-	-	Ո	-	-
5.	Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն	ԿՄ	Բ	-	-	-	Ո	Հ	-
	18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ								

1.	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացում	ԿՄ	Բ	-	Փ	-	-	-	-
2.	Անշարժ գույքի գնահատում	ԿՄ	Պ	Ա	-	-	Ո	-	-
3.	Թորած ալկոհոլային խմիչքների(բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	Վ
4.	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ)դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	Վ

	արտադրություն								
5.	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլայ ին խմիչքների արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	Վ
6.	Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	-
7.	Գարեջրի արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	Վ
8.	Աուդիտորական ծառայությունների իրականացում	ԿՄ	Բ	-	-	-	Ո	Հ	-
9.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
10.	Առևտրի իրականացման վայրի կազմակերպում	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ>>

Հոդված 7. Օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասում <<մրցույթով>> բառը փոխարինել <<մրցույթի արդյունքում>> բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 9. Անցումային դրույթներ:

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա այն գործունեության տեսակները, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործողության մեջ են գտնվել և սույն օրենքով տվյալ գործունեության տեսակները համախմբվել են մեկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակում, սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսյա ժամկետում ենթակա են վերաձևակերպման:

Սույն մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում: Սույն

պարբերությունում նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում լիազոր մարմինը լիցենզիաների գործողությունը դադարեցնելու հայցով դիմում է դատարան:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 1-ին բաժնի 2-րդ կետով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի լիցենզավորումը, մինչև օրենքով սահմանված կարգով որակավորման քննությունների անցկացման կարգը և ծրագիրը հաստատելը, իրականացվում է առանց այդ պահանջի ապահովման:

3. Մինչև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որակավորման քննությունների անցկացման կարգերի և ծրագրերի հաստատելը, օրենքով սահմանված կարգով սույն օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար տրված լիցենզիաները գործում են սույն օրենքի պահանջների պահպանմամբ:

4. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի 43-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար նոր պայմաններ և պահանջներ առաջանալու դեպքում տրամադրված լիցենզիաները ենթակա են վերաձևակերպման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսյա ժամկետում:

Սույն մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում: Սույն մասում նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում լիազոր մարմինը կասեցնում է լիցենզիաների գործողությունը:

Տեղեկանք

ՀՀ Ազգային ժողովի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և դրանից բխող այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության վերաբերյալ

Առաջարկության հեղինակը		Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
ՀՀ արդարադատության նախարարություն 2010-10-26 01/3858-10	1.	<<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել <<և լրացումներ>> բառերը, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են միայն փոփոխություններ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2.	<<Թանկարժեք մետաղների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերնագրում <<լրացում>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<լրացումներ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մեկից ավելի լրացումներ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	3.	<<Թանկարժեք մետաղների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 10-րդ հոդվածով նախատեսված 15.1-րդ հոդվածի կապակցությամբ գտնում ենք, որ լիազոր մարմինը կարող է անձին զրկել որակավորումից միայն էական նշանակություն ունեցող խախտումների դեպքում այլ ոչ թե բոլոր տեսակի խախտումների դեպքում: Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ է հստակ նշել իրավական ակտերի այն խախտումները, որոնց առկայության պայմաններում անձը կարող է զրկվել որակավորումից:	Չի ընդունվել է, քանի որ օրենքի նախագծով հստակ սահմանվում են այն խախտումները, որոնց առկայության պայմաններում անձը կարող է զրկվել որակավորումից:
	4.	<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	5.	<<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման տարեթիվը, մասնավորապես՝ <<2004>> թիվն անհրաժեշտ է փոխարինել <<2003>> թվով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	6.	<<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում <<կետից>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<մասից>> բառով՝ նկատի ունենալով	Ընդունվել է, կատարվել է համապատասխան

		<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ ՀՀ օրենքների հոդվածները բաժանվում են <<մասեր>> կոչվող միայն համարակալված պարբերությունների:	փոփոխություն:
	7.	<<Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերնագրում <<փոփոխություն>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություններ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մի քանի փոփոխություններ: Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման տարեթիվը, մասնավորապես՝ <<1999>> թիվն անհրաժեշտ է փոխարինել <<1998>> թվով:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	8.	<<Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում <<փոփոխություններ>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություն>> բառով, քանի որ նախագծի տեքստում ընդամենը մեկ փոփոխություն է կատարվում:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:
	9.	<<Անասնաբուժության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում <<փոփոխություն>> բառն անհրաժեշտ է փոխարինել <<փոփոխություններ>> բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված են մի քանի փոփոխություններ:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություն:
	10.	<<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>>, <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Սնանկության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Գեոդեզիայի և քարտեզագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Ավիացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չունենք:	

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՀ լիցենզավորման մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի առաջին ընթերցման ժամանակ կատարված առաջարկությունների մասին

Առաջարկության հեղինակը		Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1	Օրենքով սահմանել այնպիսի դրույթ համաձայն որի լիցենզիա ստանալու հայտը լիցենզավորող մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում չմերժվելու դեպքում հայտատուն համարվի լիցենզավորված և իրավունք ունենա զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա տվյալ գործունեության տեսակով	Ընդունվել է: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրեքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է լրացում, համաձայն որի լիցենզիա ստանալու հայտը լիցենզավորող մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում չմերժվելու դեպքում հայտատուն համարվում է լիցենզավորված և այդ օրվանից իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:
ՀՀ կառավարություն	2	Սահմանել, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը	Ընդունվել է: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրեքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանած աղյուսակի նշվել է, որ պրեկուրսորների ցանկը սահմանում է կառավարությունը: